Հովհաննես Շիրազ

Լիզբոնի ողջակէզներին

Յիշէ՛ք, հայեր, բալիկներուդ՝
Դեռ ծիլ ընկած գալիքներուդ,
Որ քեզ ամառ պիտի տային,
Բայց կէս ճամբին ընկան կիսատ՝
Դեռ չտեսած հողն Արարատ:
Յիշէք, հայե՛ր, ընկողներին,
Որ չհասած մեր հողերին,
Ընկան հինգն էլ ի սէր հայոց՝
Մեր հինգ միլիոն զոհուած որդոց,
Որ գեր-ձորում ընկած են դեռ՝
Հայ վրէժի յոյսով անմեռ:

Եկ գովք անենք հայ քաջերին
Խենթ սրտին էլ ընդդէմ դարի,
Յիշէ՛ք հայեր, ինչպէս Տիզբոն,
Երէկ Տիզբոն, այսօր Լիզբոն,
Եկ, դիմացիր, ազգ իմ զգօն
Հինգ հայդուկին այս երգեհոն,
Եկ, որ Վարդանն Ա ւարայրի
Անէծք դառնայ թուրքին վայրի:
Յիշէք, հայե՛ր, որ վայր ընկան
Անվերադարձ մահով, սակայն,
Սարգիս Սեդրակ, Արա Սիմոն,

Ինքը՝ Վաչէն՝ հանց երգեհոն,
Մեզ կը կանչեն ու գան պիտի
Ի սէր, գերուած Արարատի,
Ի սէր հայոց մայր հողերուն՝
Ընդդէմ հողաց թուրք գողերուն:

Որ Հայաստանն իմ խլեցին,
Մեզ վրէժը լոկ թողեցին.
Երէկ Տիզբոն,
Այսօր Լիզբոն,
Հայն է զոհւում հորիզոնից մինչ հորիզոն:
Չենք մոռանում Եղեռնը մեծ,
Որ հայ արեան ծովը խմեց,
Քարը թողեց վերապրողին,
Թուրքն է ապրում, այն էր՝ հողին,
Խամրեց արեւն ողջ հայութեան:
Յիշե՛նք, հայեր Եղեռն համայն,
Որ մեր ազգի ծուծը խմեց,
Աշխարհասաստ Եղեռնը մեծ: